



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Երևան, 0025, Արմվյան 52<sup>ա</sup> • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52<sup>а</sup> • 52<sup>а</sup> Abovyan,  
0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37, armphilology@ysu.am, [www.yasu.am](http://www.yasu.am)

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 16**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԵՈՐՀՐԴԻ՝**

**2021 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

***Օրակարգում՝***

1. 2021 – 2022 ուստարվա առաջին կիսամյակի ամփոփիչ և կիսամյակային քննությունների նախապատրաստական աշխատանքների ընթացքը ֆակուլտետում /զեկուցող՝ Ա. Սարգսյան/:
2. Մագիստրատուրայի ուսուցման ձևաչափում ամբիոնների կողմից առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն և քննարկում:
3. Ակադեմիկոս Մ. Մկրյանի կիսանդրու տեղադրման գործընթացի մասին /զեկուցող՝ Ա. Ավագյան/:
4. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 29-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի

օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ: Այնուհետև պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ համալսարանական ուսումնառությունն ավարտելու կապակցությամբ գիտխորհրդի անդամ 4 ուսանողների /Մերի Սարգսյան, Աստղիկ Սողոյան, Արշակ Պողոսյան և Վահագն Ամիրջանյան/ փոխարինել են ֆակուլտետի ուսանողական խորհրդի կողմից ընտրված չորս նոր անդամներ՝ Մարիամ Աբրահամյան, Մանե Աղաջանյան, Մանե Աղաբեկյան և Էմմա Նոնինյան: Ա. Ավագյանը գիտխորհրդի նոր անդամներին ակտիվ գործունեության կոչ արեց:

**Օրակարգի 1-ի հարցի** առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ ընթացիկ քննությունները արդեն մեկնարկել են, իսկ ամփոփիչ քննաշրջանը սկսվելու է հունվարի 10 – ից: Ա. Սարգսյանը նաև տեղեկացրեց, որ բոլոր կուրսերի հետ նախապես քննարկվել և համաձայնեցվել է քննությունների գրաֆիկը: Ամբիոններն էլ իրենց հերթին դասախոսներին ուղարկել են ամփոփիչ և կիսամյակային քննությունների գրաֆիկները:

**Օրակարգի 2 - ըր հարցի** առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ մագիստրատուրայի ուսուցման ձևաչափում ամբիոնների կողմից առաջարկվել են փոփոխություններ, որոնք արդեն ամբիոնների վարիչների և դեկանի մասնակցությամբ քննարկվել են ԵՊՀ պրոռեկտորների հետ: Նախապես ամբիոնները ցանկություն են ունեցել կրճատելու մագիստրատուրայի ուսումնառություն ժամկետը մինչև 1 տարի, սակայն քննարկումներից հետո որոշել են 1,5 տարի սահմանել՝ կրթական ծրագրերը ենթարկելով որոշակի խմբագրումների: Այնուհետև ծավալվեց քննարկում, որի ընթացքում ելույթ ունեցողները նշեցին, որ գնալով ուսանողները պակաս հետաքրքրություն են դրսևորում ուսանելու մագիստրատուրայում, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով: Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի վարիչ Ա. Ջրբաշյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ այս ուստարվանից նախարարությունը անվճար տեղերի հատկացման կարգում որոշակի փոփոխություններ է սահմանել, որոնց

հետևանքով մասնագիտությունների չբացվելու դեպքում անվճար հատկացված տեղերը այլևս չեն վերաբաշխվելու մյուս մասնագիտությունների վրա:

**Օրակարգի երրորդ հարցի** առթիվ ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետը նախաձեռնել է ակադեմիկոս Մ. Մկրյանի կիսանդրու տեղադրման գործընթացը: Անհրաժեշտ գումարի հանգանակությանը մասնկցություն են ունեցել ֆակուլտետի ամբիոնները, ակադեմիկոս Մ. Մկրյանի հարսը, ԵՊՀ արհեստակցական կազմակերպությունը, բարերարները: Ռեկտորատը խոստացել է հունվարին հատկացնել պատվանդանի համար անհրաժեշտ գումարի մի մասը: Ա. Ավագյանը հույս հայտնեց, որ զարնանը աշխատանքները արդեն ավարտված կլինեն և հնարավոր կլինի կատարել կիսանդրու հանդիսավոր բացումը:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՅԱՆ**